

Key words: the legal system, law, Code of Law, Canon Law, nation, freedom.

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀՀ ՓՈՓՈԽՎԱԾ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Լիլիթ Ղազանյան

Իրավաբանական գիտությունների թեկնածու

Արդի պետության և իրավունքի տեսության՝ որպես գիտության համար անկյունաքարային նշանակություն ունեն մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին հասկացությունների ուսումնասիրությունն ու պարզաբանումը:

Մարդու իրավունքների մասին պատկերացումները ձևավորվել են հետզհետե հասարակության, տնտեսության, քաղաքական և իրավական համակարգերի զարգացմանը զուգահեռ անցնելով պատմական աստիճանից ժամանակակից աստիճանին:

Մարդու իրավունքներ հասկացությունը բարդ հասարակական երևույթ է, որն իր գոյության սկզբից ունեցել է բազմաթիվ մեկնաբանություններ և տախմանումներ: Այսպես, Յ. Դ. Իլինի կարծիքով, մարդու իրավունքներն անհատի հնարավորություններն են, որոնք ապահովում են վերջինիս կյանքի, գործունեության և մարդկային արժանապատվության ազատությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում:

Համընդհանուր ճանաչում ստացած սահմանման համաձայն *մարդու իրավունքները նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ որոշելու իր վարքագծի չափը: Մյուս բոլոր անձինք, պետական մարմինները, կազմակերպությունները պարտավոր են ձեռնպահ մնալ այդ վարքագծին միջամտելուց¹:*

Պետության և իրավունքի տեսությունում, գոյություն ունեն նաև այլ մոտեցումներ մարդու իրավունքների հայեցակարգի վերաբերյալ: Մի կողմից՝ մարդու իրավունքները ներկայացնում են օբյեկտիվ

¹ St u Нерсесян В. С., Философия права, М., Инфра-М, 1997, с. 100.

² Ильин Ю. Д., Права человека и государства на безопасности в современном мире: Норма, М., 2007, С. 60.

³ St u Այվազյան Վ. Ն., Մարդու իրավունքներ, Եր., Տիգրան Մեծ, 2002, Գ. 12.

սկզբունքներ, որոնց վրա ընդհանուր առմամբ խառնախառն են պետության կառուցվածքն ու իրավական համակարգը: Այդ սկզբունքները պոզիտիվ իմաստով որոշում են պետության գործունեության գլխավոր ուղղությունները և սահմանափակում դրանց ազդեցությունը երկրի սոցիալական գործընթացների վրա: Այուս կողմից մարդու իրավունքները ներկայանում են որպես անձի սուբյեկտիվ իրավունքներ:

Արհաժամանակ, բարդություն է առաջացնում պետության և անհատի փոխհարաբերության օպտիմալ մոդելների որոնումը: Ակնհայտ է, որ յուրաքանչյուր պետությունում այդ մոդելները կախված են հասարակության բնույթից, տվյալ երկրում ժողովրդավարության աստիճանից, օրենքներից, տնտեսության, մշակույթի զարգացվածության աստիճանից և այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոններից: Կարծում ենք, որ գլխավոր դժվարությունը կայանում է այնպիսի համակարգի ստեղծման մեջ, որում անձը, զարգացնելով իր ներուժը, միաժամանակ ճանաչի պետության ընդհանուր նպատակները: Այդպիսի հավասարակշռությունն իր արտացոլումն է գտնում ժամանակակից ժողովրդավարական պետությունում անձի իրավունքների, ազատությունների և պարտականությունների մեջ:

Հարկ է նշել, որ բոլոր այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է ընդհանրապես մարդու իրավունքներին, միջազգային իրավական փաստաթղթերում, ինչպես նաև սահմանադրություններում օգտագործվում են «յուրաքանչյուր ոք», «մարդ», «մարդուն» ձևակերպումները, իսկ երբ խոսքը վերաբերում է քաղաքացիների իրավունքներին և ազատություններին, ապա սահմանադրությունը օգտագործում է «յուրաքանչյուր քաղաքացի» արտահայտությունը⁴:

Ընդհանրապես, այն իրավունքները և ազատությունները, որոնք առավել կենսական նշանակություն ունեն անձի, հասարակության, պետության համար, ամրագրվում են սահմանադրության մեջ և կոչվում են հիմնական (օրինակ՝ կյանքի, անձնական ազատության և անձեռնմխելիության, մտքի և խոսքի ազատության և այլ

⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք (պատ. խմբագիր՝ Ավագյան Ն. Ա.), Երևան, 2008, էջ 225:Общая теория прав человека/ Под общ. ред. Лукашова Е. А., М., Норма, 1996, էջ 32- 33:

իրավունքներ): Այսպես, 22 Սահմանադրության 2-րդ գլուխը՝ «Մարդու հիմնարար իրավունքները և ազատությունները» ամրագրում է պետության կողմից ճանաչված իրավունքների համակարգը, որի իրագործման մեխանիզմները արտացոլված են ընթացիկ օրենսդրությունում:

Հայաստանի Հանրապետությունում 1995թ. հուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքվեով ընդունված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեծագույն առաքելությունը եղավ այն որ վերջինս հայոց պետականության կայացման անշրջելի լիցք հաղորդելով, դարձավ երկրի սահմանադրական կայունությունը երաշխավորող հիմնական օրենք: Ակնհայտ է, որ Սահմանադրության ընդունումը նոր փուլ հանդիսացավ ժողովրդավարության հաստատման, սահմանադրական հիմունքների, մարդու իրավունքների և ազատությունների զարգացման և օրենսդրական ամրագրման գործընթացում:

Շոչակվեցին միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերն ու սկզբունքները, որոնցից էին՝ իշխանության տարանջատումը ու հավասարակշռումը, մարդու իրավունքների, ազատությունների և արժանապատվության՝ որպես բարձրագույն արժեքի, գերակայության սկզբունքները:

Հայտնի է, որ 22 անկախությունից ի վեր, երկրում ընթացող սոցիալ-տնտեսական զարգացումները, օրենսդրական բացերի վերացման անհրաժեշտությունն ու եվրոպական ընտանիքին անդամակցելու ցանկությունը հանգեցրին 22 Սահմանադրության փոփոխությանը: 2005թ.-ին փոփոխված 22 Սահմանադրությունն ընդլայնեց մարդու իրավունքների և ազատությունների շրջանակը, կոնկրետացրեց դրանց իրացման միջոցները: Սահմանադրական ամրագրում ստացան երկքաղաքացիությունը, մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը, 22 Սահմանադրական դատարան դիմելու անձանց իրավունքը և այլն: Ավելին, սահմանադրաիրավական բարեփոխման արդյունքում փոփոխվեց նաև ընթացիկ օրենսդրությունը հստակեցնելով մարդու իրավունքների երաշխավորման և իրացման առանձնահատկությունները: Այսպիսով, հիմնադրվել է պետության և անհատի փոխհարաբերությունների նոր հայեցակարգ՝ որտեղ մարդը, նրա իրավունքները, ազատությունները և իրավական

դրությունը հանդիսանում են բարձրագույն արժեք: Հետևաբար, մարդու, քաղաքացու իրավական վիճակի հետ, և հատկապես, դրա տարր հանդիսացող մարդու իրավունքների, ազատությունների և օրինական շահերի հետ պետք է համաձայնեցվեր մեր երկրի ինչպես Հիմնական օրենքը, այնպես էլ ընթացիկ օրենսդրությունը: Հետևաբար, պետություն-անհատ փոխհարաբերությունում առաջին տեղը զբաղեցնում են անձի արժանապատվությունը, ազատությունը, անմեղության կանխավարկածը, մարդասիրության և ժողովրդավարական այլ սկզբունքներ: Միննույն ժամանակ, Սահմանադրությամբ նեղացվել է անձի իրավունքների սահմանափակման շրջանակը և գործում է «Թույլատրելի է այն ամենը, ինչը արգելված չէ օրենքով» սկզբունքը: Այնուամենայնիվ, ՀՀ-ում ընթացող իրավաքաղաքական զարգացումները 2015թ.-ին հանգեցրին Սահմանադրության նոր փոփոխությանը, որը ձգտում է լրացնել մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների հետ առնչվող բացերը, շեշտադրելով մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման առանձնահատկությունների հստակեցումը, դրանց համապատասխանեցումը միջազգային չափորոշիչներին: Այսպես, փոփոխված սահմանադրությունում յուրահատուկ տեղ է զբաղեցնում անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով⁵: Միննույն ժամանակ, Սահմանադրությամբ արգելվում են բժշկության և կենսաբանության ոլորտներում եվգենիկական փորձերը, մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը, մարդու վերարտադրողական կլոնավորումը:

Մեր կողմից իրականացված հետազոտությունները վկայում են, որ արդի իրավաքաղաքական զարգացումներում մարդու իրավունքներն ու ազատությունները դիտարկվում են «մարդ-

⁵Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (փոփոխ.06.12.2015թ.)հոդ.25/ <http://www.president.am/hy-constitution-2015/03.10.2016/>:

պետություն» փոխհարաբերությունների ենթատեքստում, որն իրավունքների, այսպես կոչված, ուղղահայաց գործողությունն է և որտեղ մարդը հանդիսանում է կառավարման օբյեկտ, ստորադաս: Սակայն, ժամանակակից արտասահմանյան հեղինակների կարծիքով, մարդու իրավունքների խախտման մասին պետք է խոսել նաև «անհատ-անհատ» փոխհարաբերության իրավունքների հորիզոնական գործողության դեպքում: Այս տեսակետի կողմնակիցների կարծիքով մարդու իրավունքների խախտման հիմնախնդիրն առկա է նույնիսկ այն դեպքում, երբ ընդհարումն առաջացել է երկու անձանց միջև:

Մեր կարծիքով, այդպիսի մոտեցումն արդարացված չէ: Եթե անձն ուշ երեկոյան տուն վերադառնալիս ենթարկվում է հարձակման հանցագործների կողմից, ապա մարդու իրավունքների հիմնախնդիրն այս պարագայում բացակայում է: Սակայն, եթե քրեական հետապնդում իրականացնող մարմինները չեն իրականացնում գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, ապա առկա է մարդու արդար դատաքննության իրավունքի խախտում, հետևաբար և մարդու իրավունքների խախտում: Համամիտ ենք Մ. Ատովյանի հետ այն հարցում, որ քնտանիքը, սերը, ընկերությունը, գործընկերների, հարևանների հետ հարաբերությունները մի շարք իրավունքների և ազատությունների տիրույթ են, սակայն մարդու իրավունքներ հասկացությունը նրանց հանդեպ չի կիրառվում: Անհատն այստեղ հանդես է գալիս ոչ թե որպես կառավարման օբյեկտ, ստորադաս, այլ պետության հետ իրավահավասար սուբյեկտ: Այս պարագայում պետությունը պետք է, պաշտպանի անձին հորիզոնական միջամտություններից:

Հետևաբար, ոչ ոք չպետք է իր անձնական ու քննական կյանքի, տան կամ նստակազրության հետ կապված ենթարկվի կամայական միջամտության:

Արդի իրավաբանական գրականությունում մատնանշվում է մարդու և քաղաքացու իրավունքների վերաբերյալ երկու հիմնական հայեցակարգեր⁶.

⁶St'u Evens T. The politics of Human Rights: Global context and perspectives. Aldine Press, London, էջ 13-14:

⁷Տե՛ս Ատովյան Մ. Մարդու իրավունքները քո իրավունքներն են /Եր. 2004/ : 14

⁸Տե՛ս Теория государства и права /Под общ. ред. О. В. Мартышина, М. Норма. 2007/ : 44

1. Մարդու և քաղաքացու իրավունքները բնական իրավունքներ են և գոյություն ունեն անկախ պետության կողմից դրանց ճանաչման փաստից (հիմնված բնական իրավունքի տեսության վրա):

2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները բխում են պետությունից, որը և որոշում է դրանց չափն ու «նվիրում» մարդկանց (հիմնված պոզիտիվիստական տեսության վրա):

Բնական իրավունքի տեսության հիմնական դրույթները ձևավորվել են դեռևս անտիկ շրջանում: Տվյալ տեսության էությունը նրանում է, որ պետության կողմից ստեղծված դրական իրավունքից բացի գոյություն ունի այդ իրավունքից վեր դասակարգվող իրավունք, որն ընդհանուր է բոլոր մարդկանց համար և տրված է նրանց ի վերուստ: *Այդպիսի իրավունքներից են կյանքի իրավունքը, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը և այլն:* Բնական իրավունքի տեսությունը հիմնականում ձևավորվել է Թոմաս Ակվինեացու, Լոկի, Ռուսոյի, Մոնտեսքյոյի կողմից: Նրանց կարծիքով, անձի իրավունքները ծագել են պետության կազմավորումից առաջ, կախված չեն նրանից և վերադաս են պետությանը: Այս գաղափարներն իրենց անմիջական արտացոլում են գտել ԱՄՆ-ի անկախության հռչակագրում (1776թ.), Ֆրանսիայի «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրում» (1789թ.) և այլ միջազգային փաստաթղթերում: Բնական իրավունքի հայեցակարգը հանդիսանում է գրեթե բոլոր ժողովրդավարական պետությունների հիմքը: **Պոզիտիվիստական** մոտեցման համաձայն՝ մարդկանց իրավունքները, դրանց բովանդակությունը սահմանվում են պետության կողմից, որը դրանք «նվիրում է» մարդկանց:

Մեր կարծիքով՝ պոզիտիվիստական մոտեցումը չպետք է առանձնացնել ազատության, անհատականացման արժեքների արտաքին կատեգորիաներից, քանի որ օրենսդրությամբ ամրագրվելով մարդու իրավունքները, դրանք լրացուցիչ ուժ են ստանում, իսկ պետությունը ստանձնում է պարտավորություն՝ երաշխավորելու և ապահովելու այդ իրավունքներն ու ազատությունները: Ժողովրդավարական, իրավական պետությունում, քաղաքակիրթ հասարակությունում բնական և

դրական իրավունքները հակադրելու հիմքեր չկան, քանի որ վերջինս ամրապնդում և պահպանում է մարդու բնական իրավունքները:

«Մարդու իրավունքներ», «ժողովրդավարություն», «իրավական պետություն» հասկացությունները հանդես են գալիս որպես օրգանական միասնություն, և ազատական, ժողովրդավարական սահմանադրական դոկտրինայի ընդունման, երկրում սահմանադրականության հաստատման նպատակը հենց դրա երաշխավորումն է:

Միաժամանակ, մարդու իրավունքները սերտորեն միահյուսված են այնպիսի երևույթների հետ, ինչպիսիք են «ազատությունը», «հավասարությունը» և «արժանապատվությունը»: Ազատությունը առավելապես առնչվում է անձի այնպիսի իրավագործությունների հետ, որոնք մատնանշում են նրա ինքնուրույնության ոլորտները, միջամտությունից պաշտպանում նրա ներքնաշխարհը:

Նկատենք, որ ժամանակակից արտասահմանյան իրավագետները գտնում են, որ անթույլատրելի է ազատությունները կախման մեջ դնել պոզիտիվ իրավունքից, քանի որ այդպիսով մեծանում է բռնապետության առաջացման վտանգը: Ուստի էության, ազատություններն իրավունքներից տարբերվում են նրանով, որ եթե մարդու իրավունքներին համապատասխանում է կոնկրետ պետական մարմնի պարտականությունը, ապա մարդու ազատությունների իրականացման ժամանակ չկա որևէ կոնկրետ մարմին, որը պատասխանատվություն կրի այդ ազատությունների իրականացման համար: Այսպես, 22 Սահմանադրությամբ հռչակված մարդու իրավունքի և դավանանքի ազատության իրավունքի խախտման դեպքում չկա որևէ կոնկրետ մարմին, որը պատասխանատվություն կրի դրա համար:

Հիմք ընդունելով պետության կողմից իր պարտականությունների կատարման եղանակը, ազատությունները նաև անվանում են *նեգատիվ իրավունքներ*⁹՝ հասարակական կյանքի այն ոլորտները, որոնց պետությունը չպետք է որևէ կերպ միջամտի: Սակայն պետությունը պարտավոր է պաշտպանել ինչպես իրավունքները, այնպես էլ

⁹Մանրամասն տե՛ս **Sudre F.** Droit international et droit européen de l'homme. PUF. Droit fondamental, 5e édition, 2001:

ազատությունները:

Ընդհանրապես, խոսելով մարդու իրավունքների և ազատությունների մասին պետք է հիշել նաև պարտականությունների մասին, քանի որ «պետություն-մարդ» փոխհարաբերություններում երկու կողմերն ունեն փոխադարձ իրավունքներ և կրում են պարտականություններ¹⁰: Հստակ է, որ պետության և իրավունքի գիտության տեսանկյունից մարդու և քաղաքացու իրավունքներին համապատասխանում է պետության պարտականությունը և ընդհակառակը՝ պետական իշխանության իրավունքներին համապատասխանում են քաղաքացու և մարդու պարտականությունները: Ընդ որում, պետության պարտականությունների գործնական իրացումը միայն կարող է իրական երաշխիք դառնալ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ապահովման համար:

Նկատենք, որ իրավունքները երբեմն անվանում են *պոզիտիվ իրավունքներ*՝ նկատի ունենալով յուրաքանչյուրի նկատմամբ պետության ակտիվ պարտականությունները: Այսպես, բժշկական օգնության և սպասարկման իրավունքի ապահովման համար պետությունը պետք է հիմնի հիվանդանոցներ, օրենքով սահմանի անվճար բժշկական ծառայությունների ցանկը: Հարկ է նշել, որ 2015թ.-ի սահմանադրական բարեփոխումները յուրահատուկ դեր և նշանակություն հաղորդեցին պետության, որպես մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների հիմնական երաշխավորի պարտականություններին: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 3-րդ. «Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքականության հիմնական նպատակները» վերտառությամբ գլխում հստակեցվեցին մարդու և ՀՀ քաղաքացու առջև պետության պարտականությունների շրջանակը, պետության քաղաքականության հիմնական նպատակներն ու դրանց իրագործման եղանակները: Դրանցից են սոցիալական ապահովություն, աշխատանքային պայմանների բարելավումը հաշմանդամության կանխարգելման, բուժման, հաշմանդամների

¹⁰ St' u Azarvov A. Я. Права человека: новое знание, М., 1995, էջ 29:

առողջության վերականգնման ծրագրերի իրականացումը, հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանումը և այլն:

Այսպիսով, մարդու իրավունքները, արտացոլվելով Մահմանադրության մեջ, դառնում են նորմ-նպատակներ, նորմ-սկզբունքներ, որոնց երաշխավորման և իրացման վրա է խարսխվում պետության ներքին և արտաքին քաղաքականությունը: Հետևաբար, անձի իրավունքների և ազատությունների պահպանման և ապահովման գործընթացում գլխավոր դերը պատկանում է պետությանը: Փաստորեն պետության ներքին և արտաքին գործառույթները ուղղակի կամ անուղղակի ձևով ուղղված են մարդու և քաղաքացու իրավունքների ամրապնդմանն ու սնտեսական երաշխիքների կատարելագործմանը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Գիտական հոդվածի հեղինակը, իրավաքաղաքական մտքի պատմության նյութերի հետազոտության հիման վրա, բացահայտում է անձի իրավունքների առանձնահատկությունները ՀՀ Մահմանադրական բարեփոխումների համատեքստում:

Մասնավորապես դիտարկվում են անձի իրավունքների զարգացումները պետություն-անհատ փոխհարաբերության համատեքստում: Միննույն ժամանակ ընդգծվում է արդի ժողովրդավարական պետությունում անձի իրավունքների, ազատությունների հիմնարար, սոցիալ իրավական նշանակությունը, անձի իրավական դրության ձևավորման գործընթացում:

Բանալի բառեր. մարդու իրավունքներ, ազատություններ, ժողովրդավարություն, պետություն, անձի իրավական կարգավիճակ:

ПРАВА ЧЕЛОВЕКА В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИОННЫХ РЕФОРМ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Лилит Казачян

Кандидат юридических наук

РЕЗЮМЕ

Автор данной научной статьи, на основе изучения материалов из истории политико-правовой мысли раскрывает особенности прав личности в контексте конституционно-правовых реформ РА. В

частности, автор рассматривает развитие прав личности в контексте взаимоотношений государства и личности. В тоже время, автор акцентирует основное, социально-юридическое значение прав личности в становлении правового положения личности в современном демократическом государстве.

Ключевые слова: права человека, свободы, демократия, государство, правовое положение личности.

HUMAN RIGHTS IN THE CONTEXT OF THE CONSTITUTIONAL REFORM THE REPUBLIC OF ARMENIA

Lilit Kazanchian
Candidate of Law

SUMMARY

The author of this scientific article based on the research in the history of political and legal thought reveals the peculiarities of individual rights in the context of constitutional and legal reforms of the RA. In particular, the author examines the development of the individual's rights in the context of relations between the state and the individual. At the same time, the author emphasizes the fundamental, social and legal significance of individual rights in establishment of the legal status of the individual in a modern democratic state.

Key words: human rights, freedom, democracy, the state, legal status of the individual.